ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՎԵՏԵՐԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ

09.05.2014 12:23

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը այսօր՝ մայիսի 9-ին, Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ ընդունել է Պալատի վետերան փաստաբաններ Նարիման Միրզաբեկյանին, Մայիս Ավետիսյանին, Հրաչիկ Գոգինյանին և շնորհավորել նրանց Հայրենական պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի, Շուշի քաղաքի ազատագրման և Արցախի բանակի ստեղծման կապակցությամբ:
Պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհավորել է վետերան փաստաբաններին և նշել, որ- «**ցավոք, վետերանները շատ քիչ են մնացել մեր հանրապետությունում և մենք պետք է ջանք ու եռանդ չխնայենք, որպեսզի մեր ավագ գործընկերները իրենց գնահատված զգան, քանի որ վետերանները մեզ համար մեծ արժեք են ներկայացնում**»:
Վետերանները շնորհակալություն են հայտնել Փաստաբանների պալատին ցուցաբերած ուշադրության համար: 90-ամյա փաստաբան վետերան Նարիման Միրզաբեկյանը հայտնել է,-«**Փաստաբանների պալատը մեր երկրորդ տունն է եղել և մենք այստեղ աշխատել ենք շուրջ երեսուն տարի: Տեսնելով այսօրվա հեղինակությունը՝ Պալատի տեղը մենք շատ ուրախ ենք: Շնորհակալություն ենք հայտնում պալատի խորհրդի անդամներին, որ կարողացել եք այսպիսի հնարավորություններով պալատ ստեղծել: Դա փաստաբանների պատվի հարցն է**»:
Փաստաբանների պալատի նախագահի որոշումով փաստաբան վետերանները պարգևատրվել են անվանական ժամացույցներով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })